




Հ. ԹՈՒՐՇՅԱՆ

ՀԱՅՈՒԹՅԱՆ ՄԵԾ ԳՈՅԱՄԱՐՏԸ

1918 թվականի մայիսի 22-ից 27-ը հայ գործն ու աշխարհագրայինները Ղամշլուի (ներկայումս՝ Եդեգնուտի) ճահճուտներում և Սարդարապատի (ներկայումս՝ Հոկտեմբերյանի) առապարներում ո'չ միայն կանգնեցրին Արարատյան դաշտ ներխուժած թուրքական սուլթանական զորքի առաջխաղացումը, այլև ետ շարտեցին նրան:

Այդ փառավոր հաղթանակը ո'չ միայն ապահովեց հայ ժողովրդի գոյատևությունը, այլև թաղեց Թալեթի ու Էմվերի պանթուրքիստական նկրտումները, որոնք ուղղված էին ո'չ միայն հայ ժողովրդի, այլև Ռուսաստանի, նրա հեղափոխական նվաճումների դեմ: Երիտասարդ թուրքերը ձգտում էին մեկ գարկով ընդմիշտ փակել իրենց հաշիվը հայ ժողովրդի հետ և հայ բնօրրանի վրայով հասնել Բաքու, որտեղ հեղափոխությունը հաղթանակել էր այդ ժամանակ, և Դաղըստան, որը նրանք ուզում էին պատվար դարձնել ռուսների՝ դեպի հարավ առաջխաղացման դեմ և ապահովել իրենց անցումը Միջին Ասիա: Այդպիսով, Սարդարապատի ժողովրդական պատերազմն այդ ժամանակ բովանդակ Ռուսաստանում հակահեղափոխական ուժերի դեմ մղվող քաղաքացիական մեծ պատերազմի հույժ կարևոր դրվագներից մեկն էր և որպես այդպիսին՝ ոսկե տառերով իր պատվավոր տեղն է գրավել «ՄԱՀՄ քաղաքացիական պատերազմի պատմության» 4-րդ հատորում:

2նայած Սարդարապատի հերոսամարտի այս վճռական, բախտորոշ նշանակությանը, մենք, դժբախտաբար, շատ ուշացանք Սարդարապատի հերոսամարտի գնահատման և արժեքավորման հարցում:

Արարատյան դաշտը հնագույն դարերից եղել է և մնում է հայության բնօրրանը, սակայն կովկասահայության հասարակական և մշակութային-կրթական կյանքը 19-րդ դարում և 20-րդ դարի առաջին երկու տասնամյակներին կենտրոնացած էր Թիֆլիսում: Այնտեղ էին ապրում հայ գրողն ու պատմաբանը, այնտեղ էին լույս տեսնում գլխավոր օրաթերթերը: Սակայն Ալեքսանդրապոլի անկումից հետո կապն Արարատյան դաշտի հետ իսպառ կտրվել էր, և հայ բնօրրանում տեղի ունեցող ինքնապաշտպանական կռիվների մասին Թիֆլիսի Հայոց Ազգային խորհրդի ղեկավարները հարկադրված էին քավարարվել Բաթումում թուրք պատվիրակների հաղորդած միտումնավոր տեղեկություններով միայն:

Երևանն իջեցված էր գավառական կենտրոնի: Թեև Սարդարապատի օրերին Երևանում իբրև թե լույս էին տեսնում երեք փոքրածավալ եռօրյա թերթ, սակայն թղթի չընդունված պատճառով այդ թերթերը չէին կարող կանոնավոր լույս տեսնել: Եղիազարովների և Վարդանովների խանութների փաթեթի թղթերը, — որոնց մի էջի վրա այդ առևտրական տների անուններն էին գըր-

ված,—վերցնում էին ու մաքուր էջի վրա մի ազդ, մի լուր տպագրում ու պատերին էին փակցնում: Այդ իսկ պատճառով, Սարդարապատի հերոսամարտը օրվա երևանի մամուլում արձանագրվեց շատ կցկտուր ձևով: Արժեքավորման մասին խոսք անգամ լինել չէր կարող: Միայն երկու տարի հետո, Երևանի «Ռազմիկ» շաբաթաթերթում (1920, մայիսի 22) երևաց հերոսամարտի մասնակից վաշտապետ Մանասեր Մանասերյանի հոդվածը Սարդարապատի երկրորդ տարելիցի առթիվ, որտեղ հեղինակը փորձել էր գուցահեռ անցկացնել Ավարայրի և Սարդարապատի միջև: Հոդվածը թերի էր այն պատճառով, որ Սարդարապատի վճռական ճակատամարտի ժամանակ (մայիսի 22) վաշտապետ Մ. Մանասերյանի վաշտը դեռ կանգնած էր Քանաքեռում և կռվին մասնակցեց միայն երրորդ օրից սկսած: Մյուս կողմից, հարգելի վաշտապետը տեսել էր միայն ռազմաճակատի իր վաշտի բռնած բնագծի գործողությունները: Սակայն նրա հոդվածն էլ անարձագանք մնաց, որովհետև օրվա հրատապ հարցերը, որոնք անհապաղ լուծում էին պահանջում, հնարավորություն չէին տալիս ինչպես հարկն է անդրադառնալու Սարդարապատին:

Սարդարապատի հերոսամարտը գնահատելու և արժեքավորելու համար հարկավոր էր ժամանակի հեռավորություն:

1918 թվականին ես, տասնութամյա պատանի, Ներսիսյան դպրոցի նախավերջին դասարանի աշակերտ, զինվոր էի վանեցիների գնդում: Մեր գունդը վեց շաբաթ կանգնած էր Արարատի հարավ-արևմտյան լանջերին՝ Զինգիլի լեռնանցքից մինչև Արհաշի անջրոյի և անհրապույր լեռերը: Ծառայությունից ազատ ժամերին ես թափառում էի բլրից-բլուր դեպի վեր, որ ինձ հաջողվեր տեսնելու վեհատեսիլ լեռան լուսապսակ գագաթը, սակայն Արարատի լանջերը կազմող բազմաթիվ մեծ ու փոքր բարձրությունները սահմանափակում էին իմ տեսադաշտը, և այդ վեց շաբաթների ընթացքում ես կարոտ մնացի հայրենի լեռան հիացմունք պատճառող և հուսադրող լուսապսակ գագաթի տեսքին:

Սակայն եկան դառն օրեր, նահանջեցինք, թողինք բերքառատ Սուրմալուն, անցանք Արաքսը, այրեցինք Մարգարայի կամուրջը և բռնեցինք Էջմիածին տանող ճանապարհը: Երբ մոտեցանք Էջմիածին, դադար տվին, որ զինվորների հոգևածությունն անցնի և ռաշ թե շատ առույգ տեսքով մտնենք Էջմիածին: Հրացանները խաչմերուկ կանգնեցրինք, և ես մեջքիցս ցած առա ծանր բեռը, ուղղեցի մեջքս, մաքրեցի նակտիս քրք-

տինքը և ետ նայեցի: Երբ ետ նայեցի՝ տեսա հիասքանչ սարն իր ամբողջ հասակով: Արեւի ճառագայթների տակ ձյունապսակ գագաթը փայլվում էր և գագաթի հավերժական սառույցը շողշողում էր և ցուլցում արցունքի կաթիլների նման, կարծես թե ասելով՝ ինչո՞ւ հեռացաք, ինչո՞ւ պանդուխտ թողիք ինձ...

Այդպես էր ասում ստորոտից մինչև ձյունապսակ կատարը ամբողջովին երևացող վեհատեսիլ սարը:

Հեռավորությունը համահարթել էր նրա ստորոտը կազմող երկրորդական բազմաթիվ բարձրությունները, և նրանք այլևս անգոր չէին վարագուրելու, մարդկային աչքից թաքցնելու նվիրական մեծ սարը:

Այդպես է ո՛չ միայն բնության, այլև պատմության մեջ: Մի տեղ տարածության հեռավորությունը, մյուս տեղ ժամանակի հեռավորությունն օգնում են մեզ՝ ճիշտ տեսնելու մի տեղ պատմական մեծ սարը, մյուս տեղ՝ պատմական մեծ իրադարձությունը:

Ինչքան մեծ ու փոքր, փոքր ու մեծ իրադարձություններ էին մեզ խանգարում ճիշտ տեսնելու և ըստ արժանվույն գնահատելու Սարդարապատի մեծությունը:

Հիմա անվիճելի է, որ եթե 1918 թվականի մայիսին հայ ժողովուրդը Սարդարապատում չկարողանար փայլուն կերպով բռնել իր գոյատևության մեծ բնությունը, ապա մայիսի 23-ին թուրք ասքարները կըմտնեին Էջմիածին, իսկ 24-ին՝ Երևան և հրեշավոր ջարդով,—որին նրանք ընդունակ են և սովոր,—վերջ կտալին հայ ժողովրդի երկրորդ կեսին:

Այսօր միայն ժամանակի հեռավորությունը մեզ համար անվիճելի է դարձրել, որ ազգապահպանման համար հարկավոր է բնակչություն և տեղիտորիս: Միայն ժամանակի հեռավորությունը մեզ այսօր հնարավորություն է տվել ըստ արժանվույն գնահատելու և արժեքավորելու այդ բախտորոշ գոյամարտը:

Հայ ժողովուրդը բոլոր կողմերից եկել ու կծկվել էր Արարատյան դաշտում: Բոունցքը սեղմվելու սահման ունի, որից հետո այն դառնում է քարի պես ամուր: Սարդարապատում երիտասարդ թուրքերը դեմ առան հայ ժողովրդի քարի պես ամուր դարձած բոունցքին, որ ջախջախիչ հարվածներ տեղաց նրանց գլխին:

Արարատյան դաշտ ներխուժած թշնամու դեմ կռվելու համար զենք էին վերցրել և զենք էին վերցնում ու Սարդարապատ գնում զենքի ընդունակ և չընդունակ բոլոր տղամարդիկ, ծերանազարդ Թաղիանոս Թաղիանոսյանից մինչև պատանի Ակսել Բա-

կունցը, մինչ այդ իրենց ձեռքին միայն խաչ ու Ավետարան բռնած եպիսկոպոսներ ու վարդապետներ, ինչպես գիտնական Գարեգին արքայազան Հովսեփյանը, Էրզրումի առաջնորդ Զավեն արքեպիսկոպոս Մահտեսի-Բաբայանը, Աղթամարա միաբան Դանիել վարդապետը, Մշո Առաքելոց վանքի Թադեոս վարդապետը, գյուղական քահանաներ՝ իրենց գյուղացիներով, անանուն և անվանի խմբապետներ՝ իրենց աշխարհագորայիններով, որոնք համալրում էին սակավաթիվ գորքի շարքերը:

Հայության գոյամարտն էր. իրար կողքի կույում էին հայ ժողովրդի բոլոր դասերն ու դասակարգերը, հոսանքներն ու կուսակցությունները:

Եվ քանի գոյատևի հայ ժողովուրդը, այնքան ավելի ու ավելի կարծեցալիրվի Սարդարապատի հերոսամարտի նշանակությունը, և այդ հերոսամարտն այնքան ավելի ու ավելի մեզ կոգեշնչի և կառաջնորդի նորանոր սխրագործությունների:

Սարդարապատի հերոսամարտը հայ ժողովրդին հիշեցնում է և պիտի հիշեցնի, որ «վայրավատին» (Օրմանյան) և «բազմահարկ» (Ն. Ադունց) հայ ժողովուրդը Սարդարապատում հաղթեց միայն անկոտրում խանդավառությամբ, միասնաբար ոտքի ելնելով և գերագույն ճիգով լարելով իր հատնող ուժերը:

